ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 01/20

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԵՎ ԱՅԼ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՍՏԵՂԾՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ, ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Բյուրեղավան 15 հունվարի 2020թ.

2020 թվականի հունվարի 15-ին, ժամը 14:00-ին, Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան բնակավայրում՝ Բյուրեղավանի համայնքապետարանի թիվ 1 վարչական շենքում, տեղի ունեցավ համայնքի ավագանու որոշումների նախագծերի և այլ առաջարկությունների նախնական քննարկման նպատակով ստեղծված ֆինանսական, բյուջետային և տնտեսական հարցերի մշտական գործող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստ՝ «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 27-ի N 77-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին», «Բյուրեղավան համայնքի 2019 թվականի բյուջեի չորրորդ եռամսյակի կատարման ընթացքի մասին» և «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2018 թվականի փետրվարի 02-ի N 06-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» որոշումների նախագծերի թեմաներով:

Նիստին մասնակցում էին Հանձնաժողովի նախագահ Արման Օհանյանը, անդամներ Արման Խանզադյանը, Արտյոմ Ավագյանը, համայնքապետարանի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի պետ Լիդիա Պողոսյանը, Հանձնաժողովի աշխատանքներին աջակցող համայնքապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ Զարուհի Ապրեսյանը:

Հանձնաժողովի նախագահը ներկայացրեց նիստի օրակարգը՝

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 27-ի N 77-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին,
2. Բյուրեղավան համայնքի 2019 թվականի բյուջեի չորրորդ եռամսյակի կատարման ընթացքի մասին,
3. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2018 թվականի փետրվարի 02-ի N 06-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին,

համայքնի ավագանու որոշմունների նախագծերի քննարկում:

Օրակարգի առաջին հարցի՝ ***«Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 27-ի N 77-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին»*** շուրջ Լ. Պողոսյանը ներկայացրեց, որ Բյուրեղավան համայնքի ավագանու քննարկմանը ներկայացվող նախագիծը մշակվել է՝ առաջնորդվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասով և հիմք ընդունելով համայնքի 2019 թվականի բյուջեի տարեվերջի ազատ մնացորդը՝ 53949.0 հազար դրամը (37923.1 հազար դրամը՝ վարչական բյուջեի տարեվերջի մնացորդ, 16025.9 հազար դրամը՝ ֆոնդային բյուջեի տարեվերջի մնացորդ), որն ամբողջությամբ ուղղվում է 2020 թվականի համայնքի բյուջեի ֆոնդային մաս: Ելնելով վերոգրյալից՝ անհրաժեշտություն է առաջացել համայնքի 2019 թվականի բյուջեի դեֆիցիտը (պակասուրդը)՝ «0,0» հազար դրամ, փոփոխել «53949.0» հազար դրամով:

Բյուրեղավան համայնքի 2020 թվականի բյուջեի ծախսերի ընդհանուր գումարը ծրագրվել է 411615.3 հազար դրամ:

Որոշվեց՝

հավանություն տալ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 27-ի N 77-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին որոշման նախագծին և ներկայացնել ավագանու նիստին:

Կողմ- 3 Դեմ- 0

Լ.Պողոսյանը ներկայացրեց Բյուրեղավան համայնքի ***2019 թվականի բյուջեի չորրորդ եռամսյակի կատարման ընթացքը:*** Թերակատարվել են վարձակալական հողերի վարձավճարները, ինչպես նաև գյուղական բնակավայրերում աղբահանության վճարների հավաքագրումը և «Արև» մանկապարտեզ ՆՈՒՀ ՀՈԱԿ-ի վճարները. վերջինս կապված է երեխաների հաճախելիության, տեղական վճարների դրույքաչափի նվազեցման արտոնությունների կիրառման հետ:

Որոշվեց՝

հավանություն տալ Բյուրեղավան համայնքի 2019 թվականի բյուջեի չորրորդ եռամսյակի կատարման ընթացքի մասին որոշման նախագծին և ներկայացնել ավագանու նիստին:

Կողմ- 3 Դեմ- 0

«Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2018 թվականի փետրվարի 02-ի N 06-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» հարցի շուրջ Պողոսյանը ներկայացրեց, որ համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին»

օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի՝ նորմատիվ իրավական ակտում փոփոխություն կամ լրացում կարող է կատարվել միայն նույն տեսակի և բնույթի նորմատիվ իրավական ակտով: «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2018 թվականի փետրվարի 02-ի N 06-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» Բյուրեղավան համայնքի ավագանու որոշման նախագծով նախատեսվում է Բյուրեղավան համայնքի ավագանու 2018 թվականի փետրվարի 02-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքում տեղական վճարների դրույքաչափի նվազեցման արտոնություն կիրառելու կարգը հաստատելու մասին» N 06-Ն որոշման նախաբանում «2018 թվականի դեկտեմբերի 12-ի N 61-Ն» բառերը փոխարինել «2019 թվականի դեկտեմբերի 27-ի N 72-Ն» բառերով:

Բյուրեղավան համայնքի ավագանու 2018 թվականի փետրվարի 02-ի N 06-Ն որոշումն ընդունվել է հիմք ընդունելով Բյուրեղավան համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 12-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքում տեղական վճարների 2019 թվականի տեսակները, դրույքաչափերը և արտոնությունները սահմանելու մասին» N 61-Ն որոշմամբ հաստատված հավելված N1-ի 5-րդ և հավելված N2-ի 4-րդ կետերը: Նշված կետերով նախատեսված էր իրավունք վերապահել համայնքի ղեկավարին 2019 թվականի ընթացքում համայնքի կողմից մատուցված՝ մանկապարտեզի և արվեստի դպրոցի ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի համար կիրառելու 50-ից 100 %-ի չափով նվազեցման արտոնություն՝ ավագանու կողմից սահմանված կարգին, պայմաններին և չափորոշիչներին համապատասխան:

Բյուրեղավան համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքում տեղական վճարների 2020 թվականի տեսակները, դրույքաչափերը և արտոնությունները սահմանելու մասին» N 61-Ն որոշմամբ հաստատված հավելված N 1-ի 5-րդ և հավելված N 2-ի 4-րդ կետերով նույնպես նախատեսված է իրավունք վերապահել համայնքի ղեկավարին 2020 թվականի ընթացքում համայնքի կողմից մատուցված՝ մանկապարտեզի և արվեստի դպրոցի ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի համար կիրառելու 50-ից 100 %-ի չափով նվազեցման արտոնություն:

Որոշվեց՝

հավանություն տալ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2018 թվականի փետրվարի 02-ի N 06-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին որոշման նախագծին և ներկայացնել ավագանու նիստին:

Կողմ- 3 Դեմ- 0

Նիստն ավարտվեց:

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Արման Օհանյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Արման Խանզադյան

_____ Արտյոմ Ավագյան